Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
օգոստոսի 21-ի N 1153 - Ն որոշման

ԱՌԱՆՑ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

1. Պեստիցիդները և ագրոքիմիկատներն առանց փորձաքննության՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) տված եզրակացության հիման վրա կարող են ներմուծվել հետևյալ դեպքերում՝

1) «Բուսասանիտարիայի մասին» օրենքով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատների կամ պեստիցիդների ներմուծման ժամանակ.

2) օրգանական և օրգանահանքային պարարտանյութերի, պարաֆինային յուղերի, ֆերոմոնների, մանրէակենսաբանական միջատասպան պատրաստուկների, բույսերի աճի կարգավորիչների, բույսերի կենսաբանական ակտիվ նյութերի, բույսերի պատվաստանյութերի, կենդանի օրգանիզմների (մանրէների) պարունակությամբ ազդող նյութով պեստիցիդների կամ ագրոքիմիկատների, կենսաբանական, այդ թվում՝ բուսական ծագման պեստիցիդների ներմուծման ժամանակ:

2. Սույն հավելվածի 1-ին կետով սահմանված դեպքերում պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման համար ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերն էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին են ներկայացնում «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասով պահանջվող փաստաթղթերը:

3. Լիազոր մարմինը սույն հավելվածի 1-ին կետով սահմանված դեպքերում պեստիցիդների կամ ագրոքիմիկատների ներմուծման ժամանակ ուսումնասիրում է հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը և դրանք ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում տալիս է

պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման մասին եզրակացություն՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի հրամանով հաստատված ձևին համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ